



Ա.ՋԱՏ ԽՕՍԿ

ՇԼԲԱԹ 29 ԱԷՄՏ . 1903. ԱԷՔՍԱՆԴԻՒՂ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԱՏՈՐԸ

«Ոգատ Խօսք»,ի այսօրուան թիւով կ'ամբողջանայ առաջին հատորը:

Հայ լրագրութեան դժնդակ ասպարէզին մէջ շրջանի մը, որքան ալ համեստ ըլլայ այդ շրջանը, աւարտումը միշտ կարևոր իրողութիւն մըն է և կ'արժէ որ այս առթիւ խմբագիր եւ ընթերցող պահ մը կանգ առնեն եւ առաջինը քանի մը հանդիսական խօսքեր ուզղէ երկրորդին, յետոյ իրարու միջեւ առկախ մնացած հաշիւները կարգադրուին ու նորէն խմբագիր եւ ընթերցող իրենց գործին վերագառնան:

Արդ, նախ ըսենք որ Եգիպտոսի մէջ հայերէն զաւեշտական շարաթաթերթի մը հրատարակութեան ձեռնարկելով երբեք յոյս չունեցանք թէ ատով պիտի կրնայինք մեր եւ մեր պարագաներուն նիւթականը ապահովել, Ալեքսանդրիոյ նոր քարափին վրայ քանի մը կալուածք-

ներ շինել, 80 ձիու զօրութեամբ օթօմօպիւս շինել և մեր ճաշերը Լաֆիթի կամ Մօնթէպէլլօյի շամբանեայով ցօղել, ուստի շատ զոհ մնացինք երբ տեսանք որ թերթին ելքն ու մուտքը կը ցանք չուանի վրայ քալող ճարտար լարախաղացի մը հաւտասարակչութեանը մէջ պահել :

Ասիկա հայ թերթի մը համար անշուշտ մեծ յաջողութեան մը նշանն է և մենք այս իրողութիւնը պարծանքով կ'արձանագրենք հոս :

«Ազատ Խօսք», իր վեցամսեայ կեանքին մէջ իր կանոնաւոր հրատարակութեամբը բարի օրինակ պիտի հանգիստանար ուրիշ հայ պարբերականներու եթէ վերջին ամսուան մէջ, բոլորովին անակնկալ և պատահական պատճառաւ մը այդ կանոնաւորութիւնը չխանգարուէր: Բարեբախտաբար այժմ կրնանք յայտարարել որ մեր երկրորդ շրջանին չպիտի կրկնուին այդ անկանոնութիւնները և «Ազատ Խօսք», ճարտար նաւապետի մը ձեռքով վարուած նաւու մը պէս ան սայթաք՝ առաջ պիտի տանի իր ճամբան:

Մեր բախանորդներէն ոմանք այս առաջին շրջանին մէջ իրաւունք ունեցան մենէ գանգատելու թերթերու անկանոն առաքումէն: Այդ գանգատը երբեմն իրաւացի՝ շատ անգամ անիրաւ է և պէտք է մանաւանդ ուղղել եգիպտոսի թղթատարական վարչութեան, ինչպէս որ մենք

պարտք զգացինք ընելու: Այսուհանդերձ ամէն միտոց ձեռք առած ենք որպէսզի ասկէ ետքը «Ազատ Խօսք», այդ փոքրիկ արաան ալ չունենայ:

Բայց եթէ վենք թերութիւններ ունեցանք, մեր բաժանորդները անթերի եղա՞ն: Եւ պէտք է խորհիլ որ շատ աւելի դժուար է թերութիւն չունենալ թերթի մը համար, քան թէ՛ բաժանորդի մը համար: Որովհետեւ թէ՛րթ մը բազմաթիւ թերութիւններու ենթակայ է, մինչդեռ բաժանորդ մը միակ թերութեան մը. այն է՛ բաժանեզինը չվճարելու թերութեան: Արդ, անկեզծ ըլլալու համար ըսինք որ շատեր, մանաւանդ մեր Քահիրէի և գաւառներու բաժանորդներէն, այդ թերութիւնը ունեցան:

Մենք գիտենք որ մեր բաժանորդները վրձարել չուզելնուն համար չէ որ չեն վճարեր, այլ պարզապէս անհոգութեամբ: Ընդհանրապէս հայ բաժանորդները վարժուած են բաժնեզին վճարել երբ գանձումիւ համար մէկը ներկայանայ. ինքնաբերաբար բաժնեզին զրկելու առաքինութիւնը դեռ շատ քիչերու բաժինն է մեր մէջ: Սակայն եթէ Ալեքսանդրիոյ մէջ գիւրութիւն ունինք հաւաքիչ մը զրկելու, նոյնը չենք կարող ընել Քահիրէի համար. իսկ գաւառներու՝ բնաւ երբեք: Չենք կարծեր որ մենէ պահանջեն մինչեւ Օմտուրման և Փաշտա հաւաքիչ մը զրկե-


լու 5-6 բաժնեգին գանձելու համար:

Արդ, մեր վեցամսեակի աւարտման առթիւ կը խնդրենք մեր ընթերցողներէն որ իրենց շնորհաւորական այցաքարտներուն հետ հաճին մեզի զրկել, մանտա բոստով, «Ազատ Խօսք», ի գոնէ 20 թիւերուն փոխարժէքը:

Նոր շրջանին մէջ «Ազատ Խօսք», պիտի ջանայ աւելի կատարելագործութեան դիմել գրական-զաւեշտական ճիւղին մէջ: Բաց աստի յառաջիկայ թիւէն սկսեալ պիտի հրատարակենք մեր բարբերէն քաղուած երգիծական վիպակ մը եՐՕՏէ, որ կը յուսանք թէ հաճոյքով պիտի կարգացուի ամէն գասակարգի ընթերցողներու կողմէն: Մեր տաղանդաւոր աշխատակիցները Պոնդ, Ասուպ, Սկեպտիկ և Կիկո որոնց գրութիւնները, թէև ցանցառ, այնքա՞ն մեծ ախորժակով կարգացուեցան մինչև հիմակ, խոսատացած են մեզ աւելի առատ ու բեղուն արտադրութիւններ մեր երկրորդ շրջանին համար:

Ըսենք սակ որ «Ազատ Խօսք», ի հրատարակման նիւթական ապահովութիւնը երաշխաւորուած է: Բաժանորդը, ընկալագիրը վճարելէ վերջ, այնքա՞ն ապահով կրնայ քնանալ բարձին վրայ որքան եթէ բարձին տակ եգիպտական բրէտի ֆօնսիէ մը ըլլար:

ՄՐՃԱՐԱՆԻ ԹԻՒՅԵՐ



ՄԻՒԻՃԱՆԸ

Ծովեզերեայ սրճարան մը նստած,- ձեր կ'ուզէք որ նստիմ այս խոնաւաթուրմ տաքերուն, որ մարդ դիւրաւ պիտի կրնար հաբստանալ եթէ ճիշտ ըլլար աստուածային խոսքը թէ՛ «ճակտիդ քրտինքովը պիտի վաստկիս հաղղ»- մտքի բարի ու երջանիկ տրամադրութեամբ մը լի, զովութեան և անդորրի կրկնակ հնչատութեանց մէջ ի լիւզ, կը խորհէի Տօթորը Կարապետն, Փաշայեան Խանի, ու կը խնդայի ներքնապէս՝ իր սեռունին պէս երկար ու բազմեղևէջ քրքիջով մը, ինչպէս որ կ'արժէ ու ինչպէս որ կը վայլէ...

Կը մտածէի զարմանալի ճակատագրին նախասահմանեալ այս մարդուն, որ երբ նոր երկիր մը երթայ, անպատճառ կամ Սահմանադրութիւնը իրազործուելու վրայ կ'ըլլայ հոն կամ իրազործուած, ինչպէս հոս՝ ատեն մը, ինչպէս այժմ ի Պարսկաստան, դէպի ուր մեկնեցաւ Թոռ անիկա, մն, հզօր ծաղրին պարսատիկէն նետուած քարի մը արագաւազ ուժգնութեամբ...

Կը խորհէի թէ Պարսկաստանը բաղդաւոր երկիր մըն էր որ Տօթորը իր հողին վրայ ոտք չի կոխած՝ արդէն ունեցած էր իր Սահմանադրութիւնը, զընելով այսպէս զանիկա զէմ գիմաց կատարուած իրողութեան մը, որուն վերջնականութեան անողոք պատին առջև անշուշտ նորեկը խոնարհեցուցած էր իր սրածայր քիթը, վտանգաւոր բաղխումի մը մէջ զայն չի բեկանելու խոհմութեամբ:

Կ'ըսէի ինքնիրենս թէ մէկ երկու ամիս առաջ

եթէ ժամանած ըլլար ի Պարսկաստան, սահմանադրական ինչորք բոլորովին ուրիշ ընթացք մը, գոյն մը կ'առնէր կարելի է, - նոյնիսկ թոյն մը, ով գիտէ, այս զարմանալի բժիշկին ձեռքէն, զայն առօք փառօք անգիւղի աշխարհք զրկող... կը խորհէի սուկայն թէ ի՞նչ գոյն կրնար ունենալ ֆաշայեան կանաչ սահմանադրական երկիրի մը մէջ, և թէ չի պիտի ուշանար վերադառնալու մեր երանելի քաղաքը, իմանալով օրինաւոր Երեսփոխանական Ժողովին առկախ ու երկրուն՝ և ապօրէն կ'նամակալու թեան իր աթոռին վրայ վերահաստատ վիճակը...

Յանկարձ՝

- Բարեւ...

- Աստուծու բարին...

Եւ պարտնը որ քսան քայլ հեռուէն դէպի ինձ արձակած էր երկարողոր և երկարածիզ «բարեւ»ը, Պարսոյ շոգեհանաներուն պէս որոնք նաւամատոյցին չի մտնեցած՝ իրենց պարանը կը նետեն փայտէ կոուաններուն, ուղղակի վրաս եկաւ ֆշալով ու հեւալով, և առանց սպասելու հրաւերիս, աթոռ մը առաւ և ինքզինքը հանգստաւէտօրէն տեղաւորեց վրան, չի զագրելով երեսս նայելէ երեսոյթովը մէկուն որ նշանաւոր բան մը ըրած միջոցին զիմացինը կը գիտէ «ինչպէս, ըրածիս հաւնեցար» ըսելու ձեով...

Պարոն Միրիճանը, - անհերքելի կերպով այս էր անունը նորեկին, - ծանօթ մըն էր, այն մէկէ աւելի ծանօթներուս, զորոնք ճանչցած ըլլալուս բաղդը շաբաթ շանցնիր որ առիթ չունենամ աւազելու, ամէն անգամ որ սրճարան մը նստած կամ փողոցէն անցած ատենս ճակատագրիս պէս դէմս կ'ելլան և քովս կուգան իսկոյն՝ գլուխս, հէգ գլուխս, տանելու համար իրենց իօսակցութեամբը, զոր չեմ կրնար տանիլ ևս,

գժրողդարար: Համակրելի սղայ լը սահայն Միրի-
ճանը, Նոյնիակ «ազնիւ», ևրիտասարդ ու գարգոյած
որչալի որ պէտք է կեանքէն անտեղեակ և ազգային
ու գրական խնդիրներով ի վնաս քեզի զրաղելու հա-
մար, յարգանքով և նոյնիակ հիւ, ումով լի անձիգ նը-
կատմամբ, և յանուն այդ յարգանքին ու հիացումին՝
զքեզ հալածող, շարչարող, խէժի, աստղի պէս կա-
կուղ, հլու ու վահչտան, գիւցազնորէն անուշազիր
կամ ներողամիտ՝ չի նշմարելու աստիճան վանողական
չարժուձևի ու խօսուածքի բոլոր քրտնաթոր ճիգերը
զորս ի գործ կը գնես քաղաքավարութեամբ հասկը-
նելու համար իրեն թէ զքեզ ինքզինքիդ լքելով՝ ձգել
երթալը այլասիրական ազուոր ժէսթ մը պիտի ըլլար
իր կողմէն...: Մէկը այն երիտասարդներէն որոնք աշ-
քերնին ի դէտ՝ կ'անցնին փողոցներէն, սրճարաններու
առաջքներէն, բարեւը բերներուն վրայ լարուած ազե-
ղի մը նետին պէս կազմ ու պատրաստ, ի խօյզ եւ ի
խնդիր զօհի մը, որսի մը որ դուն կ'ըլլաս յաճախ, ո-
րոնք կը տեսնան զքեզ անվրէպ սրակնէութեամբ, (եր-
բեք ալ կարճատես չեն ըլլար այսպիսիները) ուր որ
ալ ըլլաս, նստած կամ ոչ, մինակ կամ խումբի մը մէջ
կորսուած, և շեշտակի կը քալեն վրադ, դէպի տնխու-
սաիելի նպատակ մը յառաջացող բաներուն մեքենա-
կան մղումովը, ու կուգան կը անկուին քովդ, առջիդ,
զլիուդ վերի եթէ նստած ես, պատուհաս վայրկեան
մը միայն ասկախ, սաւառնաթի, որ սակայն չի թըռ-
չիր, ափսոս, այլ անմիջապէս կը տեղաւորուի, հիմնա-
ւոր, անխախտ ու լայնանիտ բան մը կ'ըլլայ, անվա-
նելի ներկայութիւն մը որ կը պատէ, կը պաշարէ ըզ-
քեզ...:

Ոչ սիրեցեալ գիրքի մը լայնարաց կափարիչը ո-
րուն էտե սպաստանած ըլլաս իբր և պահով պատուա-

րի մը, ոչ բարեկամի մը հետ զլուխ-զլիս տեսակցութեան մը դադանապահ ցանկապատը, եւ ոչ ալ ուզուած, փնտռուած առանձնութեան մը մէջ՝ խորունկ մտախոհութեան մը ոգեկան մշուշը կրնան ծածկել զքեզ անոնց աչքէն, պաշտպանել զքեզ մերձեցումին, յարձակումին զէմ այս յաղթականներուն որոնք ըսել կը թուին՝

«Տեսայ, եկայ և խորդ անիծեցի...»

Եւ ինչ ըսելու համար, Տէր Աստուած, կը խլեն զքեզ մտածումէդ, ընթերցումէդ, մտերիմի մը հետ շահեկան խօսակցութենէդ... Խօսքեր որոնք օգի պէս թեթեւ են և անգոյն, առանց ունենալու անոր սննդաբարութիւնը, որոնք եգիպտական տեսակ մը ծաղիկներու պէս տնկոտ են, առանց ունենալու անոնց նկարչագեղ ու վառ եռանգները, որոնք անհամ են վարդագոյն ձմերուկներուն պէս առանց ունենալու անոնց կուտերը, որոնք հիւթիչ են յաճախ... Կ'սկսին «Ինչ լուր, ինչ նորութիւն»էն եւ կը վերջայնեն Աստուած գիտէ երբ, մինչև որ սկիզբն իմաստութեան և զլիուցաւիդ՝ մզէ քեզ վերաբուժական գործողութեան պէս կտրուկ որոշումներու, - առնել քայել, պատրուակով մը ճամբել, - որոնցմէ շատ շատ քաղաքավարութիւնը կը տուժէ կ'արիւնի քիչ մը, բայց որոնց շնորհիւ հէզ մեծցած խոշորցած գլուխդ կ'ազատի վերջապէս ու ինքզինքին կ'ըլլայ տէր և տնօրէն, նոյնիսկ խմբագրապետ ...

Երբեմն, սոյնօրինակ դիպագնական արարքէ մը ետքը՝ կը ցաւիս, կը զղշաս, խղճի խայթի պէս բաներ մը կ'զգաս «արդեօք շատ կոշտ գտնուեցայ, տղան վըշտացաւ արդեօք... վերջապէս, գէշ տղայ չէ խեղճը... ազնիւ... սորված ու սորվելու փափաքող, անձիս նկատմամբ ալ որչափ փաղաքուշ, յարգալիբ...» վախը

քնդի կը մնայ. հետեալ օրն իսկ, եթէ հանդիպիս իրեն նորէն զիմացդ է, գլխու ց վայ, քովդ, ժպտուն, խօսուն, միենոյն Միրիճանը, ամէն ասենուրնէ քիչ մը աւելի Միրիճան, որովհետ՝ առջի օրուան խղճի խայթիդ հետեանքով քիչ մը երես կուտաս իրեն: քիչ մը աւելի մտիկ կ'ընես ու կը պատասխանես իր խօսքերուն, և սնիկա կ'օգտուի ասկէ, կը զեղծանի ասով, կը ճառագայթէ, կը ճառէ, զո՛, ուրախ, կը ծաւալանայ, կը յորդէ, կը հեղեղէ և գլուխդ կը տանի, նորէն, իր խօսքերուն յորձանքին մէջ, անգարին բոլոր քարերուն զարնելով զայն շարաշար....

ՊՈՆԴ

ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՀԱՅՆԵՐԸ

Պուլիպոլիոյ մէջ տեղի ունեցած հակայունական ցոյցերը առիթ մը եղան կարգ մը յոյն թերթերու որ յաճախումներ ընեն Հայերու դէմ, այն սխալ ենթադրութեան վրայ հիմնուելով որ Հայերն ալ մաս աւելցած են այդ ցոյցերուն:

Ժամանակէ մը ի վեր մանաւանդ Ալեքսանդրիոյ և Աթէնքի յոյն թերթերը բուն յօդուածներ կը շարունակեն հրաժարակել և ասով պատճառ կըլլան ազէտ ամբոխին մէջ թշնամական զգացումներ ստեղծելու մեղի դէմ: բան մը որ կրնայ օր մը ծանր հետեւանքներ ունենալ եւ հոն՝ ուր Հայն ու Յոյնը սիրով ու եղբայրաբար կ'ապրէին, ի զո՛ւր հակառակութիւններ ստեղծել, ամենափոքր առիթով մը:

Ասոր մէկ ապացոյցը տեսանք վերջերս երբ Մէնշիէի հրատարակը քանի մը Հայերու մէկ ան- նըշան վէճը երկու յոյն լրագրավաճառչ հետ, ամենամեծ համեմատութիւն մը առաւ շնորհիւ յոյն թերթերու որոնք չվարանեցան նոյնիսկ այդ աննշան ու սովորական դէպքը խմբագրականի նիւթ ընել օրերով:

Արդ, մենք կը կարծենք որ ժամանակ է, յունական թերթերու այդ ձգտումը տւելի ծաւալ չգտած, միջոցներ ձեռք առնուլ միանգամ ընդմիջա բառնալու համար ա,դ անխորհուրդ հակառակութեան օգին:

Արդեօք կարելի չէ՞ այս նպատակով Ալեքսանդրիոյ ծանօթ հայ անձնաւորութիւններէն մարմին մը կազմել որ մտածէ այն միջոցներուն վրայ որոնք անհրաժեշտ են յոյն թերթերու պայ- քարը դադարեցնելու համար:

Կրկին պիտի վերագառնանք այս խնդրին:

ԱՊԵՐԱՆՏ ՄԸ

Խօսքս Հելվանաբնակ Լուսաբերեան Տատու- րի վրայ է:

Լաւ՞ծ էիք իր անունը երկու շաբաթ ա- ռաջ, գիտէի՞ք իր գոյութիւնը, կը կարծէի՞ք թէ երկոտանի եւ անփետուր կենդանիներուն մէջ այդպիսի շնչաւոր մը կայ. Ապահովաբար ո՛չ:

Եւ ահա՛ Բարսեղ Շահպազ բարեկամիս խելքին փչեց այդ անծանօթ ոչնչութեան ականջէն բռնել ու զայն հրապարակ նետել ըսելով՝ «Տեսէ՛ք, Տատուր է ասիկա»,:

Ատկէ ի վեր Տատուրը ճանչցուեցաւ, իր վրայ խօսեցան, «Ո՞վ է եղեր այդ մարդը որուն վրայ այնքա՞ն բռնօրէն կը յարձակի Շահպազ», ըսին, եւ վերջապէս՝ անհաւատալի իրականութիւն՝ իր գրածները կարդացին: Այս անակնկալ յաջողութեան վարձքը շուտով հասաւ: Տատուր Լուսաբերի երկրորդ էջէն առաջին էջը հրամցրւեցաւ և հաւանականաբար քիչ օրէն Տատուրեան խմբագրականներ պիտի տեսնենք հոն:

Որչա՛փ ուրախ է արդեօք խեղճ Տատուրը երկու շաբաթէ ի վեր եւ որքա՞ն կը փափաքի անշուշտ որ Շահպազ նոր յարձակում մը ընէ իրեն դէմ:

Տատուր կը նմանի Նաբօլէօնի այն զինուորին որ միշտ կը պարծենար ըսելով. ~ «Գիտէ՞ք օր մը կայսրը ինձի խօսեցաւ»,:

Եւ երբ հարցունէին թէ ի՞նչ ըսաւ: Հպարտօրէն կը պատասխանէր.

~ Հրացանը ձեռքս պալատին դրանքով կեցած էի, երբ Նաբօլէօն ներս մտած ատեն ինձի նայեցաւ և ըսաւ «Աւանակ, հրացանը շիտակ չի բռնե՞ս»,:

Եւ սակայն Տատուր իր երախտագիտութիւն

նը յայտնելու զարմանալի կերպ մը ունի: Փոխանակ Շահպազին շնորհակալութեան նամակ մը գրելու, ելեր Լուսաբերին մէջ զայն նախատել փորձեր է:

Ասիկա լրումն է ապերախնութեան:

Եւ երկու սիւնակ իր արձակը շարած է, ապացուցանելու համար թէ Բարսեղ Շահպազ խելագար մըն է:

Բարսեղ Շահպազ մէկ օր միայն խելագարեցաւ. - այն օրը ուր զիջաւ Տատուրով մը զբաղելու:

Բ. ԹՈՒՂԹ . . ԼՈՒՍԱԲԵՐ, . . ԻՆ

Մարդիկը... կատգեր են: Ու շիտակը կը սպասէի ար. Ո՛րն է ան մարդը որուն ինչութիւնը իր երեսին կուտաս և անիկա չկատղիր դէմդ և քեզի. «Ղլագար» չի պոռար:

Որովհետեւ «Լուսաբեր» թերթին վատահամբաւ խմբագիրները իրենց վրայ ճակատագրական պարտականութիւն մը առեր են ազգատեսց, հայատեսց անսկզբունք ու անվերջ ու աննպատակ ու զարչելիօրէն հսամոլ պարտականութիւն մը, այն է կուռիլ այն ամէն բանի դէմ որոնք հայ ազատագրումը ունին իրենց պէտ նպատակի. եւ որովհետեւ ես ալ քաջութիւնը ունեցայ անվախօրէն իրենց ճակտին զարնելու ուղիղ զատուցութեան փառաւոր խարազանը, բնական է որ, ատոնք, ատ արարածները պոռայլին իմ երեսիս.

- Խելագար, խելագար ես գուն, գուն չեմ պիտեր ասկէ որչափ ժամանակ առաջ ցոփ կեանք անցուցած ես

Իբր երիտասարդ, հոգ չէ թէ յեղափոխական երիտասարդ, ստիպուած եմ անշուշտ հոգալ պէտքերը զորս Բնութիւնը կը տրամադրէ. բայց եթէ գիտցած ըլլայի որ «Լուսաբեր»ի խմբագիրը պիտի զայրանար ատ բանին, տարիներ ետքը, կանխաւ, առանց ժամանակ կորսընցնելու, անշուշտ իրեն կը դիմէի իրմէ ինդրելու համար ուրիշ միջոց մը...

Ինչ և է. հիմա ինչդիրն ան է որ մարդիկը կատարելք են ու հետևաբար աւելի վտանգաւոր դարձած են հիմա. հայ ազգը պէտք է ճանչնայ իր թշնամիները և միահամուռ պէտք է խարաղանէ՝ չարաղէտ գոյութիւնը հայկական փառաւոր մարտնչումին այս երգուեալ թշնամիներուն:

Իսկ մենք որ բացինք առաջին անվեներ կոիւր մենք չենք վախնար ոչ մատնութենէ, ոչ քսութենէ ոչ ալ զրպարտութենէ. մենք ալ մեզ ճանչցողներ ունինք բաւական մը շատ և ճիշտ այդ անբիծ ճակատաբացութեան վրայ ապաւինած է որ պիտի խորտակենք սընլիքոր չնականութիւնը «Լուսաբեր»ին, անզրջրհեղեղեան բրածոներու այդ աղետալի զանգուածին:

Յառաջ, ուրեմն:

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ

ՎԷՍԷՆՈ

Ուրախութեամբ կը լսենք թէ Տ. Ա. Պէնյեանի տնօրինութեան տակ գտնուող Վէսէյօ թատերախումբը Չուհաճեանի հանրածանօթ «Լէպլէպիճի Հօրօր Աղա» օբէրէթը փորձի դրած է և քիչ օրէն պիտի ներկայացնէ:

Վստահ ենք որ մեծ ընդունելութիւն մը պիտի գտնէ այդ ներկայացումը:

«ԿՐԱԿ»Ի ԴԱԴԱՐՈՒՄԸ

Կրակ յեղափոխական թերթը, որ վերջերս սկսած էր հրատարակուիլ Ալեքսանդրիոյ մէջ Երւանդ Օտեանի և Բարսեղ Շահպաղի խմբագրութեամբ եւ որ այնքան ջերմ ընդունելութիւն գտած էր թէ Ալեքսանդրիոյ և թէ Գանիրէի հայ մտաւորական երիտասարդութեան քով, բարձրագոյն իշխանութեան մը կողմէ բխած բարեացակամ ազդարարութեան մը անսալով զազրած է:

Գանիրէի տխրահոջակ «Լուսարբ»ը արդէն զգացուցած էր այդ ազդարարութեան գալուստը իր 20 սեպտեմբերի թիւին մէջ, ուր Կրակի մասին խօսելով կ'աւելցնէր կատակի ձեւին տակ, թէ՛ «Անդղիական բարեխնամ կառավարութիւնը լուրջ միջոցներ կ'ուզէ ձեռք առնել՝ ապագայ պատասխանատուութենէ մը ազատ մնալու համար են.»

Արդեօք հակայեղափոխական մարմինը արդէն գործի սկսած է:

Որքան անձայրածիր վատութիւններ կրնան կոր ըլլալ...

Ա. Զ. Դ

Հայ տոմարակալ մը որ երկար տարիներ Կ. Պօլիս Ռէժիի վարչութեան մէջ պաշտօն վարած է և իր բուրուք պաշտօնավարութեան վկայագրերն ալ ունի եւ չորս տարի ևս վերին Եգիպտոսի մէջ ծանօթ առեւտրական տան մը քով իբրև հաշուակալ ծառայած է, այժմ պատրաստ է իբրև այցելու կամ մնայուն պաշտօնեայ ծառայել վաճառական տան մը մէջ: Կարող է նաև վարել արկղակալի պաշտօն և առ այդ հարկ եղած երաշխաւորութիւնները տալ: Գաւառներու մէջ եւս պաշտօն կը ստանձնէ, եթէ պայմանները յարմարին: Դիմել «Ազատ Սօսք»ի հասցէին:

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՅԱՆՕ

ՆՈՐ ՎԻՔՏՈՐԻԱ ՍԹԷՅԱՆՕ Աղեքսանդրիոյ Մօս
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒԱԾ Հալիթ թիւ 2

Առաջին կարգի օթէլ, մասնաւորապէս շինուած, այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով: Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքտրական լոյս: ՉԱԻԱՆՈՒՄ ԳԻՆ: Թեկեֆօն թիւ 370, Հեռագրական հասցէ՝ Նիւ Վեքթօռիա, Ռամէլէ: Թոսմալսով տասը վայրկեան Աղեքսանդրիայէն:

Ս. Յ. ՌէՂԻԿ, ՏեՕԸԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօնականերու և գինուորականներու համար: Բոլոր սեննակները ծովուն վրայ կը նային:

ՍԵՆ ԱԾԻԱՏԱՆՈՅ

ՕՒՄԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱԿՈՍՏՈՒՊԵՒՏ

Ք. ՅԱՅՁԻՔԻՔԻԱՆ

15 RUE STAMBOUL 15

ALEXANDRIE

Այս աշխատանքին մէջ կը պարտաւորուին Գրքերէն և Նիւթէն զտարի Բնութեան Քառասուն. Գրքերէն, Գրքաւոր Նիւթերն, արծաթէ և ոսկիէ ճարտարները, Թանկանքն ևն. Ձեռնգորտներ և կաշվաւորաւորներ վերաբերեալ գործեր:

Տպարանական ամէն տեսակ գործեր նայ և տար Նպաստեալով. Հարստակցութեան նրախրոյցները, այլաբարտներ, նամակալոյսները, աստղալոյսները, նաստաւարները, ամակոյցները, նայել Ներդրութիւնները, պիտի տեսնուին: Մասնաւոր թեմայք ձեռնալի և ճարտարական շատ մասեր գին:

Այս աշխատանքը վերստին կը շարունակուին Երկրաւորից, Գահիրէի և Բուրքի նիւթաւորայ այլապէս: Մասնակցելով թէ են նրան բոլոր շարունակուող ընկերները անհատական խնամակով կը կատարուին և գոն կը արժեն ամէնէն պատշաճ անձնակցութիւնը:

Եւ այլ գործերու ներքին շինել տեսնել նախքան նայանէ մը այլեկէ արդեալ աշխատանքը:

«ՆՉԱՏ ԽՕՍԲ» ՉՆՌԻԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Աղեքսանդրիա՝ Տ. Յ.

Հապիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.
Թեյլալեանի խանութը:

Գահիրէ՝ լրագրավաճառ
Տ. Հունիի և Կոլարն Բէօշ-
քի քով և. «Լուսարեր»
Թերթի գրուիչին մօտ:

Նախորդ շաբթուան
Թիւերը կը վաճառուին
կրկին գինով:

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, Ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԲԱԾ ՕՐԵՐԸ
Եգիպտոսի համար բաժնեգրին է

40 Թ ԻԸ 40 ՂՐԾ. ՈՂԶ
20 ” 20 ” ”

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն

ԵՒՐՈՊԱԿ	40	ՅԻԻ	10	ՖՐԱՆՔ
ՌՈՒՍԻԱ	2	”	4	ՐՈՒՊԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	”	”	2	ՏՈՒՆԻ

Բաժնեդադրուքիւնը կանխիկ
ՀԱՏԸ 1 ՂՐԾ. ՈՂԶ

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, Ի համար բաժնեգրին կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPT)

Ծանուցումներ կրնդունուին մասնաւոր
պայտաններով:

Պատասխանատու . Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպագր փոքր Գ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ